ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Կարեն Թռչունյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ)
2021 թվականի նոյեմբերի 9-11-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

ՅՈՒՆԵՍԿՕ

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի 41-րդ նստաշրջանի շրջանակներում կայանալիք Կրթության վերաբերյալ բարձրաստիճան գլոբալ հանդիպմանը

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Քննարկվել են հետևյալ թեմաները. կրթության բոլոր մակարդակներում պետության դերի մեծացում, ֆինանսների ավելացում և մարդկային կապիտալի մեջ ներդրումներ, COVID-19 համաճարակային իրավիճակում կրթության իրականացման խնդիրներ և առաջարկվող լուծումներ, ուսուցիչների և դասախոսների դերի բարձրացում, ինչպես նաև 21-րդ դարում կրթության իրականցման ձևերի փոփոխութուն: Հատուկ անդրադարձ է կատարվել առցանց ուսուցման խնդիրներին և դրանց հնարավոր լուծումներին:

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի 41-րդ նստաշրջանի շրջանակներում կայացած Կրթության վերաբերյալ բարձրաստիճան գլոբալ հանդիպման ընթացքում տարբեր երկրների նախարարների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ քննարկվել են կրթության գլոբալ հիմնախնդիրները և դրանցում Հայաստանի Հանրապետության ներգրավվածությունը և ապագա անելիքները:

- **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Հանդիպման ընթացքում քննարկվել են ընդհանուր մոտեցումների ձևավորումը և խնդիրների լուծումը, մասնավորապես՝ անդրադառնալով այն հանգամանքին, որ 170 միլիոն սովորող այսօր ստանում է հիբրիդային (առկա/առցանց) կրթություն, և պետք է ձևավորվեն նոր մոտեցումներ՝ այն ավելի արդյունավետ դարձնելու համար:

- **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Առաջարկվում է շարունակել ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ կրթության ոլորտում առկա համագործակցությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2019 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է կրթության վերաբերյալ գլոբալ համաժողովներին, անհրաժեշտ է ակտիվացնել Հայաստանի դերը և ներգրավվածությունը ղեկավար կառույցներում:

Կարեն Թռչունյան

15.11.2021